

Մ10Գ₂Կ տեսակի շարժիչի յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 02.10.2023թ. ժամը 11⁰⁰–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան–ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով

Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. Մ10Գ₂Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղի ձեռքբերման գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Կայանի արտադրական կարիքների և տրանսպորտի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ձեռք բերել շարժիչի յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2023թ. չորրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով (գեկուցագիր № 67,12.09.2023թ.):

Մ10Գ₂Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀՁ-ՊԸ-ՇՅ-16/02.10.23** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու

հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Մ10Գ ₂ Կ տեսակի շարժիչի յուղ	լիտր	410	ՀրազՁԷԿ ԲԲԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ	1600 դր, ներառյալ ԱԱՀ-ն
	լիտր	410	ՀրազՁԷԿ ԲԲԸ	2. Մոսէսքո ՍՊԸ	1750 դր, ներառյալ ԱԱՀ-ն

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխանող և նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՋ-ՊԸ-ՇՅ-16/02.10.23 ծածկագրով Մ10Գ₂Կ տեսակի 410 լիտր շարժիչի յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ին:
2. Կնքել պայնամագիր «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1600 դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, 410 լիտր շարժիչի Մ10Գ₂Կ տեսակի յուղի ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան